ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵԵԿ-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԺՈՂՈՎԸ

Մույն թվականի սեպտեմբերի 20-25-ը Նորվեգիայի Թրոնդհեյմ քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) 12-րդ Ասամբլեայի նախապատրաստական ծիսական հանձնաժողովի վերջին հանդիպումը, որին մասնակցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Հանդիպման վայր էր ընտրված Նորվեգիայի Թրոնդհեյմ քաղաքը, քանի որ այստեղ պիտի տեղի ունենա ԵԵԿ-ի 12-րդ Ասամբլեան 2003 թ. հունիսի 25-ից հուլիսի 2-ը:

Այս հանդիպման ժամանակ վերջնականապես ճշտվեցին ԵԵԿ-ի 12-րդ Ասամբլեայի ընթացքում տեղի ունենալիք ծիսական արարողությունները և նրանց բովանդակությունը:

Ծրագրված երեք Ս. Պատարագներից մեկը պետք է լինի հայկական: Հայկական Ս. Պատարագից բացի առավոտյան միջկոնֆեսիոնալ արարողություններից մեկի ընթացքում կատարվելու են «Առաւօտ լուսոյ» և «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» շարականներն ու ընթերցվելու է «Զքէն զոհանամք» աղոթքը: Արարողության ընթացքում քարոզի փոխարեն Եզնիկ Սրբազանը պետք է ներկայացնի մի խոսք հայկական խաչի և խաչքարի առանձնահատկությունների ու խորհրդի մասին:

Ժողովն ավարտվելու է Նիդարոս գետում Ջրօրհնեքի արարողությամբ. նախ Եվրոպայի ավելի քան 50 երկրներից բերված ջուրը (որը բացման արարողության ժամանակ լցվելու է մի մեծ արծաթյա կաթսայի մեջ) լցվելու է գետը՝ «Զայն Տեառն ի վերայ ջուրց» սաղմոսի ուղեկցությամբ, ապա Օրթոդոքս Եկեղեցիների ներկայացուցիչները կատարելու են արարողության՝ Ս. Խաչը ջուրը գցելու մասը, իսկ Հայ Եկեղեցու պատվիրակությունն ավարտելու է Ջրօրհնեքի արարողությունը՝ «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգեցողությամբ, Ս. Մյուռոնի հեղմամբ և «Պահպանիչ»-ով: